Employment Development Department
State of California

Գործազուրկ եք:

Կորցրե՞լ եք աշխատանքը, կամ արդյո՞ք կրճատվել է աշխատանքի ժամաքանակը:

Ներկայացրե՛ք և կառավարեք Ձեր Գործազրկության ապահովագրության (UI) հայցը՝ օգտվելով UI Online℠-ից:

www.edd.ca.gov/UI_Online

Մուտք գործեք UI Online, որպեսզի՝

- հայց ներկայացնեք կամ վերաբացեք
- հաստատեք իրավունակությունը նպաստների համար և ավելի արագ վճարվեք
- ստանաք հայցի և վճարման վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունները
- ստանաք կարևոր ծանուցումներ, օրինակ՝ հիշեցումներ նպաստների համար իրավունակությունը հաստատելու մասին
- դիտեք առերես և հեռախոսային ընդունելությունները
- հարցեր տաք
- և ավելին:

UI Online Mobile℠ ծառայություն է տրամադրում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին:

Կարող եք UI Online-ի միջոցով նոր հայց ներկայացնել ստորև նշված ժամերի ընթացքում՝

Երկուշաբթի	4 a.m. - 10 p.m.
Երեքշաբթի – ուրբաթ	2 a.m. - 10 p.m.
Շաբաթ	2 a.m. - 8 p.m.
Կիրակի	5 a.m. - 8:30 p.m.

Ձեր հայցը ներկայացնելուց հետո կարող եք ցանկացած ժամանակ մուտք գործել UI Online համակարգ՝ հայցը դիտելու և կառավարելու համար:

UI Online հաշիվ բացելու վերաբերյալ տեղեկությունները՝ հակառակ կողմում:

Սկսե՛ք այսօր:

Employment Development Department
State of California

Ստեղծեք Benefit Programs Online համակարգի մուտքի տվյալներ

Եթե արդեն ունեք Benefit Programs Online համակարգի մուտքի տվյալներ, կարող եք բաց թողնել այս քայլը:

- Այցելեք **www.edd.ca.gov/BPO** և ընտրեք **Register (Գրանցվել):**
- Շարունակելու համար ընդունեք դրույթները և պայմանները:
- Տրամադրեք անձնական էլեկտրոնային փոստի հասցե, որը միայն Դուք եք օգտագործելու, նստեղծեք գաղտնաբառ:
- Ընտրեք անձնական պատկեր և մակագիր: Ընտրեք չորս գաղտնի հարց և պատասխանեք դրանց:
- Ստուգեք Ձեր էլ.փոստը: Էլեկտրոնային նամակը ստանալուց հետո 48 ժամվա ընթացքում ընտրեք եզակի հղումը, որպեսզի ավարտեք գործընթացը, հակառակ դեպքում հարկ կլինի ամեն ինչ նորից սկսել:

Կարևոր է. Ստուգեք թափոնի կամ լցոնի պանակը, եթե մուտքի արկղում չտեսնեք այս հաղորդագրությունը:

Ներկայացրեք Ձեր UI հայցը

Սկսելու համար մտեք Benefit Programs Online և ընտրեք **UI Online**:

- Ընտրեք **File a Claim (Ներկայացնել հայց):**
- Կարդացեք **UI Claim Filing (UI Հայցի ներկայացման մասին)** հրահանգները: Շարունակելու համար ընտրեք **Next (Հաջորդ):**
- Տրամադրեք Ձեր մասին ընդհանուր տեղեկություններ, վերջին գործատուի տվյալները և տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին:
- **Summary Page (Ամփոփագիր էջում)** վերանայեք Ձեր տրամադրած տեղեկությունները, այնուհետև ընտրեք **Submit (Ներկայացնել):**

Ծանոթություն. Հայցը ներկայացնելուց հետո կցուցադրվի հաստատման էջ: Կարող եք հաստատման համարը պահել ձեր փաստաթղթերի հետ:

Գրանցվեք UI Online համակարգում՝ նպաստներ ստանալու ձեր իրավունակությունը հաստատելու համար

Մտեք Benefit Programs Online և ընտրեք **UI Online**, որպեսզի սկսեք գրանցումը: Հարկավոր է տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

- անունը և ազգանունը, ինչպես նշված է Ձեր հայցում
- ծննդյան թվականը
- սոցիալական ապահովության քարտի համարը
- EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:*

*Եթե Դուք UI համակարգի նոր հաճախորդ եք, հայցը ներկայացնելուց հետո նկատի ունեցեք 10 աշխատանքային օր, որպեսզի փոստով ստանաք EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: